ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԼՎԱ

Եթե հասնենք քաղաքացիական համերաշխության, ապա մյուս խնդիրները որպես դրանից ածանցյալ, կարող ենք հաջողությամբ լուծել,– այսպես են մտածում Ադրբեջանի քաղաքական ուժերը: Սակայն ինչպե՞ս հաղթահարել այդ գերխնդիրը: Սա այդ «ինչպեսն» է, որ բուռն քննարկումներում հնչող իրարամերժ կարծիքների բախմամբ, օրըստօրե առավել շիկացնում է Բաքվի քաղաքական մթնոլորտը:

Ինչպես հայտնի է, դեռևս Սումգայիթի եւ ապա Էլչիբեյի իշխանության օրոք հարցի բազմաթիվ արծարծումներն այդպես էլ չեն հանգեցրել որեւէ դրական տեղաշարժի, ինչի հավաստումն են իրար հաջորդած պետական հեղաշրջումները եւ կամ դրանց ձախողված փորձերը: Բայց քանի որ ներկայումս առավել, քան գուցե երբեւէ սրությամբ է զգացվում հասարակական համերաշխության հաստատման անհրաժեշտությունը, որպես հանրապետության առջեւ ահագնացած հիմնախնդիրների լուծման գլխավոր միջոց, ուստի բացառություն չի կազմում նաեւ Հեյդար Ալիեւի կառավարման ժամանակաշրջանը: Թեկուզ, շտապենք նկատել, ինչպես հավաստում են լրատվական աղբյուրները, այս անգամ եւս գերխնդրի լուծումն առանձնակի հույսեր չի ներշնչում անգամ քննարկումների մասնակիցներին:

Դեռեւս նոյեմբերի կեսերին, հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական բաժինը: «Բաքուն եւ գյուղերը» մյուավորման նախաձեռնությամբ հարցի առթիվ կազմակերպվել է, այսպես կոչված, «կլոր սեղան», որտեղ քաղաքական ուժերը մշակել են քաղաքացիական համերաշխության պայմանագրի նախագիծ: Ավելի քան 30 կուսակցություններ ու հասարակական կազմակերպություններ արդեն ձեռնամուխ են եղել այդ փաստաթղթի քննարկմանը: Հերթական միջոցառումը, դարձյալ նույն նախաձեռնությամբ, տեղի է ունեցել նոյեմբերի 26–ին:

Հետաքրքիր է, ինչպիսի՞ք են առկա կարծիքները:

Նախապես նշենք, որ գրեթե բոլոր կուսակցություններն էլ բարձր են գնահատում այն դերը, որ կարող է կատարել այդ փաստաթուղթը պատերազմական եւ տնտեսական դժվարությունների ներկա փուլում: «Քաղաքացիական համերաշխություն» կուսակցության (ինչպես տեսնում ենք Ադրբեջանում նույնիսկ այդպիսի կուսակցություն կա) կարծիքով, հասարակական համերաշխությունը Ադրբեջանին անհրաժեշտ է օդ ու ջրի պես, իսկ սոցիալ–դեմոկրատները գտնում են, որ այն մեծապես կնպաստի ոչ միայն Ղարաբաղի հիմնախնդրի շահեկան հիմնուղղման (Հայաստանական պատերազմի հայտարարում), այլեւ կնպաստի հանրապետությունում ժողովրդավարության հաստատմանն ու իսկական ժողովրդավարական ընտրությունների անցկացմանը:

Չվիճարկելով փաստաթղթի հնարավոր դերը, ադրբեջանական ընդդիմության առաջատար ուժը ժողովրդական ճակատը, միաժամանակ առաջ է քաշում մի շարք նախապայմաններ, որոնց ապահովման դեպքում միայն կարելի է գնալ պայմանագրի ստորագրմանը: Մասնավորապես, ԺԺՃ–ն, ինչպես նաեւ ժողովրդավարական կուսակցությունը, պնդում են, որ մինչեւ այդ պերը է ազատ արձակել բոլոր քաղաքական բանտարկյալներին: Նրանց հետ գրեթե համամիտ է նաեւ մեկ այլ ազդեցիկ քաղաքական կառույց Ազգային անկախություն կուսակցությունը, միայն մի վերապահմամբ, որ նախապես պերը է հստակեցնել, թե բանտարկյալներից ովքեր են դատապարտվել քաղաքական եւ ովքեր քրեական շարժառիթներով: Սակայն այդ նախապայմանը հանդիպում է «Նոր Ադրբեջան» կառավարող կուսակցության եւ կենտրոնական կուսակցությունների բլոկի անդամ սոցիալ–դեմոկրատների կտրական առարկությանը:

Բացի այդ, որպես հիմնական նախապայման, Ժողճակատը առաջարկում է, որպեսզի քաղաքական համերաշխության պայմանագիրը ստորագրեն նաեւ իշխանությունները: Չնայած առաջարկությունը հավանության է արժանացել կուսակցությունների մեծ մասի կողմից, սակայն դարձյալ առկա են առարկություններ: Այսպես, նույն սոցիալ–դեմոկրատները գտնում են, որ դա փաստորեն ոչինչ չի փոխի: Իսկ «Նոր Ադրբեջանի» կարծիքով փաստաթուղթը, նախ եւ առաջ, պերք է ստորագրեն հասարակական–քաղաքական կառույցները, որից հետո իշխանությունները կարող են այն ընդունել քննարկման:

Մինչդեռ սա «Քաղաքացիական համերաշխություն» կուսակցության կարծիքով, առհասարակ նման փաստաթղթի անհրաժեշտություն չկա եւ քաղաքացիական համերաշխությունը չի կարող կնքվել պայմագրի տեսքով, մի կողմից քաղաքական կառույցների, մյուս կողմից պետության միջեւ: Ընդհակառակը, այն պերք է հնչի որպես համագործակցության համընդհանուր կոչ, ուղղված հասարակական–քաղաքական ուժերին եւ իշխանություններին:

Տարաձայնություններ կան նաեւ այն հարցում, թե ովքե՞ր են առավել նախանձախնդիր քաղաքացիական համերաշխության հաստատման մեջ: «Նոր Ադրբեջանը», օրինակ, այն կարծիքին է թե իշխանությունները միշտ էլ համերաշխության են կոչել մյուս հասարակական–քաղաքական ուժերին: Իսկ ահա ընդդիմության պնդմամբ, ընդհակառակը, իշխանությունները կատարել եւ շարունակում են կատարել պառակտիչ դեր քաժանիր, որ տիրես սկզբունքով, եւ եթե երբեւէ հնչել է համերաշխության կոչը, ապա միայն ընդդիմության կողմից: Տվյալ պարագայում, թե որքան անիմաստ է այդ բանավեճը, հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը, ակնհայտ է, կարելի է ասել, բոլոր կուսակցությունների համար, սակայն այն տրակավին շարունակվում է, յոթ սարի երեւում թողնելով համերաշխության հաստատման գաղափարի իրագործումը:

Այնուամենայնիվ, արդյո՞ք հնարավոր է մոտակա ժամանակներում քաղաքացիական համերաշխության կայացումն Ադրբեջանում: Ի դեպ, անգամ բաքվեցի առանձին դիտորդների կարծիքով, այս էլ որերորդ տարին է, ինչ «համերաշխություն» արտահայտությունն Ադրբեջանի ներքաղաքական կյանքում կատարում է յուրօրինակ քաղաքական հալվայի դեր, որի հաճախակի կրկնությունից, ինչպես ժողովրդական իմաստությունն է ասում, հագիվ թե քաղցրանա որեւէ մեկի իշխանությունների եւ կամ ընդդիմության բերանը: Համենայնդեպս տեսանելի ապագայում:

ԳՐԻԳՈՐ ՍԻՄՈՆՅԱՆ